ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ *Հայոց լեզու և գրականություն*

Թեմա՝ *Դասի ընթացքում աշակերտների ինքնուրույն եւ ակտիվ աշխատանքի ապահովում*

Կազմեց՝ *Դոնարա Գաբրիելյան*

Սյունիքի միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Լուսինե Սողոմոնյան

Կապանի թ.2 ավագ դպրոց՝ ՊՈԱԿ

Կապան 2022թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Էջ

Ներածություն ---------- 3

«Պարագաներ» թեմայի ամփոփում ---------- 5

Եզրակացություն ---------- 13

Օգտագործված գրականություն ---------- 14

Հավելված (դասի պլան)---------- 15

Հավելված 1(սահիկներ) ---------- 18

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների մեջ մայրենի լեզուն յուրահատուկ դեր ունի: ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆ Է:

Մայրենի լեզվի իմացությունը բազմաբնույթ գիտելիքներ ձեռք բերելու, մշակութային արժեքներին հաղորդակից դառնալու, սեփական ստեղծագործական ունակությունները դրսևորելու բացառիկ միջոց է:

Մայրենի լեզվի ուսուցիչը կոչված է լուծելու կրթական առաջնահերթ խնդիրներ.

1. Իրականացնել՝
   - նպատակաուղղված ակտիվ ուսուցում,
   - սերտ հաղորդակցություն ազգային մշակույթի և նրա միջոցով համաշխարհային մշակույթի հետ,
   - արդի հասարակության մեջ ազատ ու նպատակահարմար հաղորդակցություն՝ կյանքի բոլոր բնագավառներում խոսքային գործունեություն ծավալել կարողանալու նպատակով:
2. Ապահովել՝
   - մայրենի լեզվի անթերի իմացություն,
   - մայրենի լեզվի առանձնահատուկ դեր՝արժեքային համակարգի, սովորողի ազգային նկարագրի ու բարոյական կերպարի ձևավորման գործում:

Հայոց լեզվի դպրոցական ուսուցման ժամանակակից կարևորագույն պահանջը շարունակում է մնալ աշակերտի խոսքի և ստեղծագործական կարողությունների զարգացումը: Հետևաբար, ամենից առաջ անհրաժեշտ է ապահովել հայոց լեզվի դպրոցական դասընթացի յուրացումը՝ տեսական և գործնական առումով: Խոսքը վերաբերում է ոչ թե տեսական գիտելիքները ինքնանպատակ սերտելուն, այլ այդ գիտելիքներն ըստ էության յուրացնելուն և համապատասխան կարողություններ ու հմտություններ ձեռք բերելուն: «Բայական անդամի լրացումներ» թեման հայոց լեզվի ուսուցման գործընթացում կարևորագույն տեղ է զբաղեցնում: Թեմայի նպատակային յուրացումը կկանխի լեզվական շատ տարածված սխալներ(հատկապես խնդրառական/:

Սույն հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնառության գործընթացում սովորողի ինքնուրույնության եւ ակտիվության ապահովումը:

Սովորողների ինքնուրույնությունն ու ակտիվությունն ապահովվող իրատեսական նպատակներն են.

. խթանել,սովորեցնել,բարելավել,աջակցել, լրացնել, զարգացնել, որակը բարձրացնել

. ուժեղացնել, միավորել, համախմբել, համակարգել, կապակցել, կատարելագործել

. սահմանել ռազմավարություն, նախանշել հետագա անելիքները

Անհրաժեշտ է նաեւ խնդիրների ձեւակերպումը.

. սահմանել, ուսումնասիրել, ծրագրել , նախապատրաստել, ստեղծել, մշակել

. կիրառել, անցկացնել, փորձարկել, կազմակերպել, ընդգրկել

. բացահայտել, հաստատել, վերլուծել, գնահատել, առաջարկել, ներկայացնել

«Պարագաներ» թեմայի ամփոփիչ դասի միջոցով / 8-րդ դասարան/ կոնկրետ ներկայացվում են ինքնուրույնությունն ու ակտիվությունն ապահովող աշխատանքները.

. աշխատանք դասագրքի վրա

. ուսումնաօժանդակ նյութերի ուսումնասիրություն

. տեսադասերի դիտում եւ դիտարկում

. տնային աշխատանք

. վերջնարդյունք:

ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ

Չափորոշիչ		
Սովորողների պատրաստվածությանը ներկայացվող պահանջներ		
Գիտելիքների համակարգ		
Հիմնական դպրոցն ավարտողը պետք է		
Առաջին մակարդակ	**Երկրորդ մակարդակ**	**Երրորդ մակարդակ**
Իմանա՝	***Իմանա՝***	***Իմանա՝***
Նախադասության երկրորդական անդամներ (գոյականական և բայական անդամի լրացումներ)	Բայական անդամի լրացումներ՝ խնդիրներ (տեսակները), պարագաներ (տեսակները), դրանց հետ կապված կետադրությունը	Նախադասության երկրորդական անդամների արտահայտությունը բառով, բառակապակցությամբ և նախադասությամբ

«ՊԱՐԱԳԱՆԵՐ» ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ 8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Ընդհանրապես թեմայի ամփոփման ժամանակ կարեւորում եմ սովորողների ինքնուրույնությունն ու ակտիվությունը: Որպեսզի աշակերտները կատարեն ինքնուրույն աշխատանքներ, անհրաժեշտ է, որ նրանք ունենան իրենց գործողությունները , գործելակերպը հստակ իրագործելու պատկերացում: Նրանք պետք է իմանան, թե ինչ աշխատանք են կատարելու, ինչ նպատակ է այն հետապնդում, որն է լինելու վերջնարդյունքը:

Ինքնուրույն աշխատանք կազմակերպելիս հաճախ եմ օգտագործում « Աշխատանք դասագրքի վրա» մեթոդը, որը կիրառվում է ուսումնական ծրագրերին համապատասխան՝ հաշվի առնելով սովորողների ուսումնական եւ տարիքային հնարավորությունները:

Սովորողների ճանաչողական ակտիվությունն ու ստեղծագործական գործունեությունը զարգացնելու համար համեմատաբար մատչելի ուսումնական նյութերը չեմ բացատրում, այլ պահանջում եմ ուսումնասիրել ինքնուրույնաբար եւ դասի ընթաց - քում քննարկել, վերլուծել, ամփոփել տվյալ դասին դասագրքի վրա կատարած ինքնու – րույն աշխատանքի արդյունքները: Հանձնարարում եմ նաեւ թեմայի շրջանակում ծանոթանալ եւ ուսումնասիրել ուսումնաօժանդակ նյութեր / «Շարահյուսություն», Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան/:

Ուղղորդում եմ նաեւ դիտել համապատասխան տեսադասերը, համեմատել դասագրքի նյութի հետ, ֆիքսել կարեւորագույն տեղեկությունը եւ ստեղծել սահիկներ՝ օգտվելով ինֆորմատիկայի ուսուցչի խորհուրդներից:

Սովորողի ինքնուրույնության դրսեւորման գործում մեծ է նաեւ տնային աշխատան – քի դերը: Տնային աշխատանքների գլխավոր առանձնահատկությունը աշակերտների լրիվ ինքնուրույնության ապահովումն է: Այս դեպքում բացակայում է ուսուցչի ղեկավարու - թյունը: Նրանք առաջնորդվում են դասի ընթացքում ուսուցչի տված խորհուրդներով եւ ցուցումներով: Տնային առաջադրանքները կատարելիս սովորողները լայնացնում ու խորացնում են իրենց գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, դաստիարակվում ինքնակառավարման ու ինքնուրույնության զգացումներով:

Այս բոլոր աշխատանքների նպատակային եւ հետեւողական իրականացումը շոշափելի ու տեսանելի է դարձնում վերջնարդյունքը:

Նախքան «Պարագաներ» թեմայի ամփոփումը՝ աշակերտները բավարար փորձ ունեն նախադասության անդամների ուսումնասիրության քայլերից՝

. Ինչ է ցույց տալիս տվյալ անդամը

. Ինչ հարցերի է պատասխանում

. Ինչով է արտահայտվում

Նախորդ դասերի ժամանակ կազմվել էր աղյուսակ եւ աստիճանաբար լրացվում էր.

Պարագա	Հարց	Ինչո՞վ է արտահայտվում
Տեղի	որտե՞ղ, ու՞ր	
Ժամանակի	երբ	
Ձևի	ինչպես	
Պատճառի	ինչու	
Պայմանի	Ինչ պայմանով	
Նպատակի	ինչի	
Չափ ու քանակի	Ինչքան,որքան	

Աշակերտները արդեն բավարար հիմք ունեն ամփոփման համար:

Թեմայի ուսումնասիրության ընթացքում հանձնարարվել էր տեսադասերի դիտում եւ սահիկների պատրաստում / սա եւս առկա է/:

Ամփոփիչ դասը պլանավորել եմ ԽԻԿ համակարգով:

Դասի նպատակը՝ ԻՄԱՆԱԼ

. պարագաների տեսակները

. պարագաները որպես նախադասության ճշգրտող, բացահայտող, բնութագրող միավորներ

. պարագաների արտահայտությունը

. համակարգել ունեցած գիտելիքները

. խթանել ինքնուրույնությունը եւ ակտիվությունը

. սովորել հետազոտելով, ուսումնասիրելով

ԿԱՐՈՂԱՆԱԼ

. կազմել պարագա /ներ/ ունեցող նախադասություններ՝ գոյականի տարբեր հոլովներով, մակբայներով, դերանուններով, կապային կառույցներով

. տրված բայերի հետ գործածել պարագաներ

. հատվածից դուրս գրել պարագաները՝ նշելով՝ ինչով է արտահայտված

. կազմել տրված նախադասությունների գծապատկերը

. նախադասությունը վերլուծել շարահյուսորեն

. ներկայացնել ինքնուրույն աշխատանքները

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ

. կիմանա, կճանաչի, կտարբերի պարագաները

. ինչ հարցերի են պատասխանում

.ինչով են արտահայտվում

Դասի կահավորվածությունը – պաստառ, աղյուսակ, գծապատկեր, ուսումնաօժանդակ գրքեր, գունավոր կավիճներ, համակարգիչ,սահիկներ

Մեթոդներ – «Աշխատանք դասագրքի վրա»,հասկացությունների աղյուսակ, գաղափարների քարտեզագրում, շրջագայություն պատկերասրահում, ինքնագնահատման աղյուսակ

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ

Հարց՝ Քանի՞ պարագա կա հայերենում:

Պատասխան՝ 7 /8-րդ դասարանի դասագրքում ներկայացված է 7 պարագա, մյուսներին առնչվում են 9-րդ դասարանում/

Մտագրոհ «7» թվի շուրջ – Էլ ինչերն են լինում 7-ը:



Թվարկել պարագաները:

Լրացնել հարցաթերթիկը՝ Ես եւ պարագաները

Ե՞ՐԲ եմ ծնվել -

ՈՐՏԵ՞Ղ-

ԻՆՉՈՒ՞-

ԻՆՉԻ՞ –

ԻՆՉՊԵ՞Ս-

Ի՞ՆՉ ՊԱՅՄԱՆՈՎ-

ՈՐՔԱՆո՞վ կիրականացնեմ ծնողներիս երազանքը –

Հարցերին պատասխանել կարճ, նաեւ հումորով, իսկական պատասխան չունենալու դեպքում հորինել որեւէ բան:

Հարցեր - Ո՞ր պարագան եմ սիրում, ինչու՞:

Ո՞ր պարագաներն եմ հեշտ հիշում:

Ո՞ր պարագաներն են հաճախ գործածվում:

Ինչո՞վ են տարբերվում պարագաները խնդիրներից:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈՒԼ

Դասարանը բաժանել 2 խմբի / դասարանում սովորում է 10 աշակերտ, որոնցից 3-ը ունեն Ա մակարդակ, 5-ը՝ Բ մակարդակ, 2-ը՝ Գ մակարդակ/:

Տրված է 10 նախադասություն,պետք է գտնել պարագան եւ խմբավորվել նույն պարագայի շուրջ:

Տրվում են առաջադրանքները.

.Գտնել տրված նախադասությունների պարագաները, որոշել տեսակը, արտահայտությունը:

.Կազմել 1 նախադասություն՝ գործածելով 3-4 պարագա:

. Վերլուծել տրված նախադասությունը շարահյուսորեն եւ կազմել գծապատկերը:

.Կազմել հարցեր պարագաների վերաբերյալ՝ հավելելով հարց՝ ինչ կլիներ, եթե չլիներ տեղի պարագան...

/դարձյալ ակնկալվում է հումորային պատասխան/

. նկարել տվյալ պարագայի խորհրդանիշը

Տրվում է ժամանակ առաջադրանքները կատարելու համար:

Ապա խմբերը ներկայացնում են պատասխանները՝ ապահովելով բոլոր անդամների ընդգրկվածությունը:

Առանձնահատուկ ուշադրություն ենք դարձնում շփոթության տեղիք տվող կառույցներին՝

տեղի, ժամանակի պարագա – մասնավորող պարագայական բացահայտիչ

ձեւի պարագա – որպես, իբրեւ կապերով մասնական բացահայտիչ

ձեւի պարագա - միջոցի անուղղակի խնդիր

պատճառի պարագա – ներգործող խնդիր

Սովորողների ուշադրությունը հրավիրում եմ նաեւ կետադրության վրա, հատկապես նպատակի պարագայի դեպքում / նշված նպատակային դեպքերը ներառված են խմբերին տրված առաջադրանքներում/:

Կատարվում են ինքնագնահատում, փոխադարձ գնահատում եւ ուսուցչի կողմից գնահատում: Լրացվում է գնահատման համապատասխան սանդղակը /գնահատման թերթիկը շրջում է խմբերով/:

ԿՇՌԱԴԱՏՄԱՆ ՓՈՒԼ

Առաջադրանք խմբերին / «Անդրադարձ»/

Տրվում է պնդումների 2 փունջ: Պատասխանները հիմնավորել համապատասխան օրինակներով եւ մեկնաբանություններով:

1-ին խումբ

1. Պարագաները արտահայտվում են միայն գոյականի հոլովաձեւերով եւ մակբայներով:
2. Գործողության հետ կապված առարկաները կոչվում են պարագաներ:
3. Պարագաները լինում են տեղի, ժամանակի, ձեւի, միջոցի:
4. Պես կապով կարող են կազմվել թե՛ ձեւի, թե՛ ժամանակի պարագաներ:

2-րդ խումբ

1. Գոյականը տեղի պարագա կարող է դառնալ միայն կապերի հետ:
2. Բոլոր պարագաները կարող են ունենալ մասնավորող պարագայական բացահայտիչ:
3. Տեղի եւ ժամանակի պարագաները դրվում են ուղղական, սեռական հոլովներով:
4. Բոլոր պարագաները կարող են արտահայտվել կապային կառույցներով:

Պատասխանները քննարկելուց հետո կազմվում է ամփոփիչ աղյուսակ:



ՊԱՐԱԳԱՆԵՐ

		Գոյական											
		ուղղական	սեռական	տրական	հայցական	բացառական	գործիական	ներգոյական	մակբայ	դերանուն	ածական	դերբայ	կապակցական
1.	Տեղի			●	●	●	●	●	●	●			●
2.	Ժամանակի			●	●	●	●	●	●	●		●	●
3.	Ձևի						●		●	●	●	●	●
4.	Պատճառի					●						●	●
5.	Պայմանի												●
6.	Նպատակի			●								●	●
7.	Չափ ու քանակի								●	●	●		●

Ապա «պատկերասրահում» տեղադրվում են աշակերտների պատրաստած սահիկները: / Հավելված 1/

Դիտարկել պարագաների աղյուսակը, կատարել եզրահանգումներ:

. ՈՒղղական եւ սեռական հոլովներով պարագաներ չեն դրվում:

. Ամենաշատ արտահայտման ձեւ ունեն տեղի եւ ժամանակի պարագաները:

.Պայմանի պարագան միայն կապային կառույցով է արտահայտվում / հավելել՝ արտահայտվում է նաեւ գործիական հոլովով. Տարածքը տրվում է վարձով: Դու այս գործը կհասցնես՝ միայն գիշերները չքնելով: / Դասագրքում այս դեպքը չի նշված: /

.Մակբայների 4 տեսակները կազմում են 4 պարագա՝ տեղի, ժամանակի, ձեւի, չափ ու քանակի:

.Ածականները մակբայական կիրառությամբ կարող են դառնալ ձեւի եւ չափի պարագաներ:

Ներկայացվում են 8-րդ դասարանում սովորող 10 աշակերտների ուսումնառության հետազոտության արդյունքները:



Համեմատել աղյուսակները.

ԽՆԴԻՐՆԵՐ									
		Գոյական							
Գործողության հետ կապված առարկաներ		ուղղական	սեռական	տրական	հայցական	բացառական	գործիական	ներգոյական	կապային կառույց
1.	Ոիղիղ								
2.	Ներգործող								*կողմից*
3.	Հանգման								*ընդդեմ, դեմ, վրա*
4.	Միջոցի								*միջոցով*
5.	Անջատման								
6.	Վերաբերության								*մասին, շուրջը, վերաբերյալ*
7.	Միասնության								*հետ, հանդերձ*

ՊԱՐԱԳԱՆԵՐ												
		Գոյական										
Գործողության հետ կապված հանգամանքներ		ուղղական	սեռական	տրական	հայցական	բացառական	գործիական	ներգոյական	*մակբայ*	*դերանուն*	*ածական*	*դերբայ*	*կանոնավոր կառույց*
1.	Տեղի			●	●	●	●	●	●	●			●
2.	Ժամանակի			●	●	●	●	●	●	●		●	●
3.	Չևի						●		●	●	●	●	●
4.	Պատճառի					●						●	●
5.	Պայմանի												●
6.	Նպատակի			●								●	●
7.	Չափ ու քանակի								●	●	●		●

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ուսուցման գործընթացում ինքնուրույնության եւ ակտիվության ապահովումը մեծապես նպաստում է ուսման արդյունավետությանը:Այն հնարավորություն է տալիս բացահայտել սովորողի ներուժը:

Ինքնուրույնությունը հավաքական հատկանիշ է, որն ունի մի շարք բաղկացուցիչ – ներ եւ ենթադրում է նախաձեռնողականություն, ակտիվություն, ինքնավստահություն, նպատակասլացություն:

Ինքնուրույնությունը անձի կենտրոնական հատկանիշ է:

«Պարագաներ» թեմայի ամփոփիչ դասի հիմքում դրվեց անձնային որակների այս «շքերթը», եւ ունեցանք «գունավոր» արդյունքներ:

Պարագաների,ընդհանրապես նախադասության անդամների ուսուցման գործընթա-ցում կարեւորվեց երեք առանձնահատկություն՝ ի՞նչ է ցույց տալիս

ի՞նչ հարցի է պատասխանում

ինչո՞վ է արտահայտված

Մի կողմից չպետք է հասնել ծայրահեղության եւ ինքնանպատակ ուսուցանել միայն լեզվական կանոններ, մյուս կողմից էլ սխալ է տեսական նյութը լիովին անտեսելն ու միայն գործնական աշխատանքի վրա հենվելը, քանի որ առանց տեսության գործնականն ուսուցանելը անհնար է:

Ինքնուրույնությանն ու ակտիվությանը նպաստած աշխատանքները լեզվական նյութը դարձրին տեսանելի, ապահովեցին մատչելիություն, կանխեցին ձեւով եւ հարցով նման լրացումների շփոթումը, նպաստեցին գեղագիտական ճաշակի զարգացմանը, «գունավորեցին» գիտելիքը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս.Վ. Գյուլբուդաղյան, «Ժամանակակից հայոց լեզու»
2. Ս. Գ. Աբրահամյան, «Ժամանակակից գրական հայերեն»
3. Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան, «Շարահյուսություն»
4. Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան, «Մանկավարժություն»
5. Սոնա Միսկարյան («Օհանյան» կրթահամալիր (տեսանյութ՝ «Բայական անդամի լրացումներ»

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկան – մայրենի

Դասարանը – 6-րդ

Դասի տիպը - համակցված

Թեման – Հ. Սահյան, «Արաքս» բանաստեղծությունը

Նպատակը – կարդալ եւ մեկնաբանել բանաստեղծության հիմնական գաղափարը

. տեղեկություններ Արաքս գետի մասին

. բանավոր խոսքի զարգացում

. ստեղծագործական կարողությունների եւ երեւակայության զարգացում

. հայրենի բնաշխարհի արժեւորում

. համագործակցային կարողությունների զարգացում

Վերջնարդյունք – նոր տեղեկություններ կիմանա Արաքսի մասին

Մեկնաբանելով բանաստեղծությունը՝ կզարգացնի բանավոր խոսքը

Կզարգացնի երեւակայությունը

Կարժեւորի հայրենի բնաշխարհը

Կզարգացնի համագործակցային կարողությունները

Մեթոդը – մտագրոհ, դերային խաղ, քառաբաժան աղյուսակ

Միջառարկայական կապ – աշխարհագրություն, կերպարվեստ, երաժշտություն

Ներառարկայական կապ – բնաշխարհի վերաբերյալ այլ բանաստեղծություններ

Դասի կահավորվածությունը – դիմանկար, բնանկարներ, համակարգիչ, գաղափարների քարտեզագրում

Դասը պլանավորված է ԽԻԿ համակարգով:

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ

Բնաշխարհ +հայոց լեզու

Վերհիշել բանաստեղծություններ, որոնցում զուգակցվում են բնաշխարհն ու հայոց լեզուն:

Հանապազօրյա հաց դու մեր միակ
Արարման օրից Արարատ սարի...
Պահիր նրան բարձր ու վճիտ
Արարատի սուրբ ձյունի պես...

Արաքսի պես միշտ կենդանի,
միշտ անսպառ հայոց լեզուն...

Հարց - Ինչ գիտեք Արաքսի մասին:

Լրացնել՝ անուններ մայր գետ բնութագրումներ

--- --- ---

--- --- ---

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈՒԼ

. Համառոտ տեղեկություններ հեղինակի մասին

. Բանաստեղծությունը հարցնել կարդալ / կամ անգիր/, արձակ շարադրել

.Դուրս գրել «զրույցը» / կարկաչում է, շառաչում է..../

. Շարք կազմել , «հոսել գետի պես», «ցույց տալ Արաքսի տրամադրությունը»

.Առաջադրանքներ՝ նշել ջրային այլ տարածքներ / գետ, ծով..../

«գետ» բառով նոր բառեր կազմել, ուղիղ եւ փոխաբերական իմաստներով կազմել նախադասություններ, գրել դարձվածքներ

ԿՇՌԱԴԱՏՄԱՆ ՓՈՒԼ

Խմբային աշխատանք / 3 խումբ/ - ինչ գիտեինք ինչ իմացանք

Լրացնել քառաբաժան աղյուսակը

Անդրադարձ եւ ամփոփում

Ինչ են սովորեցնում մեզ հայրենի բնապատկերները՝ Արարատը, Արագածը, Սեւանը, Արաքսը:

Լինել՝ Արարատի պես սուրբ,

Արագածի պես ամուր,

Սեւանի պես քաղցր,

Արաքսի պես անսպառ:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ – Բնաշխարհի վերաբերյալ այլ բանաստեղծություն ընտրել, առոգանությամբ կարդալ, արձակ շարադրել

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկան – գրականություն

Դասարանը – 7-րդ

Թեման – Ա. Բակունցի կենսագրությունը

Դասի տիպը – նոր նյութի հաղորդման

Նպատակը – հիշել եւ վերարտադրել Ա. Բակունցի կենսագրության կարեւոր դրվագները

. համակարգել կենսագրական տվյալներն ու փաստերը

.ձեռք բերել ինքնակենսագրություն գրելու կարողություն

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ

.կհիշի եւ կվերարտադրի Ա. Բակունցի կենսագրության կարեւոր դրվագները

. կհամակարգի կենսագրական տվյալներն ու փաստերը

. ձեռք կբերի ինքնակենսագրություն գրելու կարողություն

Դասի կահավորվածությունը – դիմանկար, գրքույկ,Բակունցի պատմվածքները

Մեթոդներ - «Մտագրոհ», «Հեղինակի աթոռ»

ԽԹԱՆՈՒՄ

Ինչ գիտեք Ա. Բակունցի մասին:

Աշուն էր, պայծառ աշուն... / հատվածը ծանոթ է 6-րդ դասարանից/

Հիշեցնել,որ էքսկուրսիայի ժամանակ եղել են Ա. Բակունցի տուն-թանգարանում:

Պատմում են, ինչ հիշում են:

Ներկայացնել Ակսել Բակունց գրական ծածկանվան պատմությունը:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ

Հանձնարարել աշակերտներին դասագրքից կարդալ Ա. Բակունցի կենսագրականը եւ ժամանակակիցների հուշերը, ապա գրել ինքնակենսագրություն՝ իրենց դնելով հեղինակի տեղը:Աշակերտները կարող են մեկ փոփոխություն կատարել կենսագրության մեջ :

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ

Կիրառել «Հեղինակի աթոռ» հնարը: Ըստ ցանկության՝ մի քանի աշակերտ նստում են «հեղինակի աթոռին» եւ կարդում իրենց գրածները: Մյուս աշակերտները բարձրաձայն ընթերցում են միայն իրենց ցանկություն – փոփոխությունները /20 րոպե/

Տնային առաջադրանք՝ վերհիշել կենսագրությունը, ներկայացնել 1 պատմվածք:

ՊԱՐԱԳԱՆԵՐ

Տեղի
Ժամանակի
Չևի
Պատճառի
Պայմանի
Նպատակի
Չափ ու քանակի

Տեղի պարագա

Տեղի պարագան ցույց է տալիս *գործողության կատարման վայրը:*

? Տեղի պարագան պատասխանում է *ու՞մ, որտե՞ղ (որտեղի՞ց, որտեղո՞ւ)* հարցերին:

Տեղի պարագա

- Տեղի մակբայներով

Սովորելը նման է հոսանքին հակառակ լողալուն. կանգ առնես՝ քեզ հետ կքշի:

Ամեներ պատահում են աշխատանքը խայտառակող մարդիկ:

Գինին ներս մտավ, խելքը դուրս թռավ:

Թմբուկի ձայնը հեռվից անուշ կգա:

Ժամանակի պարագա

Ժամանակի պարագան ցույց է տալիս *գործողության կատարման ժամանակը:*

? Ժամանակի պարագան պատասխանում է *ե՞րբ* հարցին:

Գործողության կատարման ժամանակ ասելով հասկանում ենք.

- Գործողության սկսվելու պահը.

Արհեստ ունեցողը առավոտից կեսօր է սոված, չունեցողը՝ մինչև իրիկուն:

- Գործողության տևողության ժամկետը.

Նա, ով հարց է տալիս, հիմար է հինգ բոպե, ով չի հարցնում, հիմար է ամբողջ կյանքում:

- Գործողության կատարման կամ ավարտի պահը.

Երջանկության իսկական արժեքը իմանում են միայն այն ժամանակ, երբ նա ոչնչ անհետացել է:

Ժամանակի պարագա

- Ժամանակի մակբայներով.

Բանն արա, հետո պարծեցիր:

Գայլը երբեք չի կշտանա:

Երբ Աստված ուզում է մեկի տունը քանդել, առաջ խելքն է առնում:

Երջանկությունը ոչ թե այն է, երբ միշտ անում ես, ինչ ուզում ես, այլ այն է, երբ միշտ ուզում ես այն, ինչ անում ես:

ՁԵՎԻ ՊԱՐԱԳԱ

Գործողության կատարման **ձև** ցույց տվող լրացումը կոչվում է ձևի պարագա:

Ձևի պարագան պատասխանում է **ինչպե՞ս, ի՞նչ ձևով** հարցերին:

ՁԵՎԻ ՊԱՐԱԳԱ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԱՌՆԱԼ.

- Ձևի մակբայները.

Օրինակ՝

Կանչում է կրկին, կանչում *անդադար*
Էն չքնաղ երկրի կարոտը անքուն,
Ու թևերն ահա փռած *տիրաբար*՝
Թռչում է հոգիս, թռչում դեպի տուն:

(Հ.Թումանյան)

Որպես, իբրև

ձևի պարագա

Այսօր նա պահեց իրեն *իբրև վերջին խաբեբա:*

(խաբեբայի նման, խաբեբայի պես)

մասնական բացահայտ

Մենք հարգում էինք *նրան՝ իբրև ազնվաբարո մարդու:*

ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԳԱ

Գործողության կատարման **նպատակ** ցույց տվող լրացումը կոչվում է նպատակի պարագա:

Նպատակի պարագան պատասխանում է **ինչու՞, ինչի՞ համար, ի՞նչ նպատակով** հարցերին:

ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԳԱ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԱՌՆԱԼ.

- Գոյականները՝ դրված տրական հոլովով.

Օրինակ՝

Անուշը, կուժն առած, գնաց աղբյուրը՝ *ջրի:*

Երեխային ուղարկեցին *հացի:*

Գյուղացիները դուրս էին եկել *վար ու ցանքի:*

ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԳԱ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԱՌՆԱԼ.

- *Համար, նպատակով, հանուն, հօգուտ, ի շահ* կապերով ու կապական բառերով ձևավորված կապակցությունները.

Օրինակ՝

Շինել եմ այն ոչ զարդերի,
Այլ *ջերմության համար,*
Հյուրընկալվող ձեր սրտերի
Մտերմության համար:

(Հ.Սահյան)

ՊԱՏՃԱՌԻ ՊԱՐԱԳԱ

Գործողության կատարման **պատճառ** ցույց տվող լրացումը կոչվում է պատճառի պարագա:

Պատճառի պարագան պատասխանում է **ինչու՞, ի՞նչ պատճառով, ինչի՞ց** հարցերին:

ՊԱՏՃԱՌԻ ՊԱՐԱԳԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՒՄ Է.

- Պատճառի իմաստ ունեցող կապերով ու կապական բառերով (*պատճառով, շնորհիվ, երեսից, ձեռքից և այլն*), որոնք դրվում են գոյականների սեռական հոլովաձևի կամ *այս, այդ, այն* դերանունների վրա.

Օրինակ՝

Հոգնածության պատճառով երկար ժամանակ չէր կարողանում քնել: Հանգիստ չէր տալիս այն միտքը, թե Բաղամյանն *իր երեսից* է այդ վիճակում հայտնվել:

- Բացառական հոլովով.

Օրինակ՝

Ուրախությունից նա լաց եղավ:

Նա ուրախությունից ցատկոտում էր:

Ինչի՞ց, ինչի՞ պատճառով

Ճանապարհը թրջվել էր անձրևից:

Անձրևը թրջել էր ճանապարհը:

Պայմանի պարագա

Գործողության կատարման **պայման** ցույց տվող լրացումը կոչվում է պայմանի պարագա:

Պայմանի պարագան պատասխանում է **ի՞նչ պայմանով, ո՞ր դեպքում** հարցերին:

Պայմանի պարագան արտահայտվում է.

- *Պայմանով, դեպքում, պարագայում կապական բառերի և սեռական հոլովաձևի* կամ *այս, այդ, այն, նույն* ցուցական դերանունների կապակցությամբ:

Օրինակ՝

Տղաները համաձայնեցին աշխատել *վարձատրվելու պայմանով: Այդ պարագայում* ես ինձ ազատ եմ համարում գործողություններիս մեջ: *Հաջողվելու դեպքում* ազատամարտիկների ջոկատը կգրավեր բարձունքը:

Չափի պարագա

Չափի պարագան ցույց է տալիս գործողության կատարման չափը:

Չափի պարագան պատասխանում է *ինչքա՞ն, որքա՞ն, ի՞նչ չափով* հարցերին:

Չափի պարագան արտահայտվում է.

- Չափի մակբայով.

Օրինակ՝

Ձորը *ծայրեծայր* լցված էր հեղեղի ջրով:

- Չափ, քանակ արտահայտող կապերով և այլ բառերով.

Օրինակ՝

Ես *շատ անգամ* էի եղել անտառում:

Մի քանի անգամ թակեց դուռը:

Որքա՞ն

Որոշիչ

Չափի պարագա

շատ մատիտներ

շատ նկարել

Հիշի՛ր.

- Բազմիցս ասել եմ:
- ~~Բազմիցս անգամ ասել եմ:~~
- Կրկին խոսել:
- ~~Կրկին անգամ խոսել:~~

ՊԱՐԱԳԱՆԵՐ

	Գոյական										
	ուղղական	սեռական	տրական	հայցական	բացառական	գործիական	ներգոյական	մասնիկ	դերանուն	ածական	թվական	ցմամանակ դիմանուն
1. Տեղի			●	●	●	●	●	●	●			●
2. Ժամանակի			●	●	●	●	●	●	●		●	●
3. Չափ						●		●	●	●	●	●
4. Պատճառի					●						●	●
5. Պայմանի												●
6. Նպատակի			●								●	●
7. Չափ ու քանակի								●	●	●		●

Նախադասության երկրորդական անդամներ

- Լրացումներ
  - Բայական անդամի լրացումներ
    - Խնդիրներ
    - Պարագաներ
  - Գոյականական անդամի լրացումներ
    - 1.Որոշիչ
    - 2.Հատկացուցիչ
    - 3.Բացահայտիչ